Հայաստանի ներքին գործոց փոխնախարարն ասում է, թե Մոսկվան ինքն էր դրդում հատուկ գնդեր ստեղծել

- Պարոն Քոչարյան, Հայաստանի հանրապետության ներքին գործերի նախարարությունը դեռևս գտնվում է միութենական ՆԳ նախարարության ենթակայության տակ, այսինքն ճանաչվում է նրա ստորաբաժանումներից մեկը: Ինչո՞վ բացատրել այն հանգամանքը, որ մեր սահմանային գոտում միութենական ՆԳ զորքերը եւ բանակի ստորաբաժանումները ոչ միայն զինաթափում էին օրինական զենք կրող մեր միլիցիոներներին, այլ նաեւ փորձում ոչնչացնել՝ առանց իրադրության պարզաբանման:

- Մեր միլիցիայի աշխատակիցները օրինական կարգով են եղել սահմանային գոտում, որպեսզի ապահովեն սահմանամերձ գոտու բնակչության գույքի եւ անձի անվտանգությունը: Նրանց ծերբակալումը զայրացրեց մեզ: Շատերը տեսան «Պրավդայում» տպված լուսանկարներից մեկը, ուր պատկերված «գրոհայիններից» մեկը Կիրովականի միլիցիայի պատասխանատու աշխատակիցն էր: Նրանք հայտարարում են, թե Հայաստանի հանրապետության ՆԳ նախարարության հատուկ վարչության գունդը եւ ՕՄՈՆը օրինական չեն, թե իբր նրանք չեն համապատասխանում իրենց ծառայության կառուցվածքին: Անցյալ տարի դրանց ստեղծումը անհրաժեշտություն էր եւ հանրապետության տարածքում այդ ստորաբաժանումները կայունացրին բարդ իրավիճակը: Նախարարների խորհրդի որոշմամբ ստեղծվել էր միլիցիայի հատուկ գունդ, այդ որոշումը այս դեպքերից մեկ ամիս առաջ ուղարկվել էր Մոսկվա: Փաստորեն նրանք տեղյակ էին այս ամենին: Դրանք օրինական ստորաբաժանումներ են, ունեն պետական կառուցվածք եւ կանոնադրություն: Զարմանալին այն է, որ Մոսկվան ինքն էր առաջարկում, որ հանրապետական բյուջեի հաշվին ստեղծվեն նման գնդեր: Իսկ հիմա ինքն էլ, չգիտես ինչու, չի ճանաչում մեր որոշումը:**

- Մինչ սահմանային գոտու վերջին իրադարձությունները, պաշտպանական ֆունկցիաները դրված էին ԽՍՀՄ ՆԳՆ զորամիավորումների վրա: Ի՞նչն էր պատճառը, որ հայտնի դեպքերից առաջ նրանք դուրս բերվեցին ադրբեջանա-հայկական սահմանից, այդ տարածքը թողնելով անպաշտպան:

- Հանրապետությունում գտնվող ներքին զորքերի հրամանատարությունը դիմել էր Մոսկվա եւ դեպքերի լարված շրջանում Մոսկվայից եկավ որոշում՝ դուրս բերել ստորաբաժանումները սահմանից: Նրանց կողմից դիրքերն անմիջապես լքելուց հետո, սահմանի այն կողմում գտնվող համանման ստորաբաժանումներն սկսեցին գրնդակոծել մեր գյուղերը: Այս դեպքերի առումով հարուցված է քրեական գործ, եւ քննության ավարտից հետո մամուլում գործը կհրապարակվի ավելի հանգամանորեն:

- Ուրեմն, պետք է հասկանալ հետեւյալը, որ ՆԳ մոսկովյան նախարարությունը Հայաստանի տարածքում եղած իր զորքերին հրամայում էր զիջել դիրքերը, իսկ Ադրբեջանի տարածքում եղած իր զորքերին՝ հաթակվել:

- Տրամաբանությունը դա է ասում: Իսկ թե ինչ որոշում է եղել ընդհանուր ղեկավարության կողմից՝ կարելի է միայն ենթադրել: Թե ինչ խաղ է տեղի ունեցել, ժամանակը ցույց կտա:

Պատրաստեց ԼԵՎՈՆ ՍՐՍԵԼՅԱՆԸ